ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N *ՄՄԱՌԿ -ՀԲՄԾՁԲ-8/4*

ք. Դիլիջան

«30» հունվարի 2018թ.

«Մոնթե մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Գ.Սարգսյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Մարգարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին

...րացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի ...ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է` **198 000 000 /Մեկ հարյուր իննսունութ միլիոն/** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը` այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենքդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման` պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք` պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունհնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով,

խարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 վականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ | «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ |
| ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1 | ք. Երևան, Բուռնազյան 7 |
| ,,Արարատբանկ,, | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ151004235983010О | Հ/Հ 1570020500760100 |
| ՀՎՀՀ 07619891 | ՀՎՀՀ 00851011 |
| Տնօրեն՝ Գ. Սարգսյան | Տնօրեն՝ Գ. Սարգսյան |
| ______________________ (ստորագրություն) | ______________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
«30» հունվարի 2018թ. կնքված

ՄՄԱՌԿ -ՀԲՄԾՁԲ-8/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. Սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնողը Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի ճաշարանում և դաշտային պայմաններում անձնակազմին պետք է ապահովի ոչ պակաս օրական երեքանգամյա տաք սննդով, հետճաշիկով և հետընթրիքով:

2. Անձնակազմի սննդի մատուցումը պետք է իրականացվի ՀՀ կառավարության 03.12.2015թ. N1456 որոշմամբ հաստատված N5 հիմնական ապահովման չափաբանակի շրջանակներից ոչ պակաս և սննդամթերքի փոխարինման շրջանակներում:

3. Օրական անձնակազմին մատուցվող ճաշատեսակները, աղցանները և խավարտները պետք է լինեն՝ նախաճաշին՝

- երկու տեսակից ոչ պակաս խավարս, մշտապես պահպանելով բազմազանությունը,

ճաշին՝

- երկու տեսակից ոչ պակաս ապուր,
- երեք տեսակից ոչ պակաս խավարս,
- երկու տեսակից ոչ պակաս աղցան,
- երկու տեսակից ոչ պակաս մսեղիք,

ընթրիքին՝

- երկու տեսակից ոչ պակաս խավարս, մշտապես պահպանելով բազմազանությունը,
- մեկ տեսակից ոչ պակաս ձուկ, բացառությամբ սկումբրիա, սարդինա, կարպ, համանման տեսակների:

Չափաբանակով նախատեսված մնացած սննդատեսակների մատուցումը պետք է իրականացվի շաբաթական սննդի բաշխման ցուցակով նախատեսված քանակների և օրվա կարգացուցակով նախատեսված սննդի մատուցման ժամերին:

4. Ծաբաթվա յուրաքանչյուր ուրբաթ օրը ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է կազմի հաջորդ շաբաթվա 7 օրերի համար սննդի բաշխման ձևաթերթիկը, այն համաձայնեցնի Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի բժշկական և պարենային ծառայությունների պետերի, ճյութապահովման գծով տեղակալի հետ և ներկայացնում Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի պետի հաստատմանը: Բաշխման ձևաթերթիկում յուրաքանչյուր փոփոխություն պետք է կատարվի վարժարանի պետի թույլտվությամբ:

5. Դաշտային պայմաններում սննդի պատրաստման և մատուցման ժամանակ մսեղենը և ձկնեղենը կարող է փոխարինվել մսի պահածոյով, աղցանը՝ ծավարեղենով կամ այլ բանջարեղենով, այն օգտագործելով ճաշատեսակների մեջ, փոխարինումը իրականացնել ՀՀ կառավարության 03.12.2015թ. N1456 որոշմամբ հաստատված փոխարինման նորմաների:

6. Յուրաքանչյուր օր, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի պետի կողմից նախորդ օրը հաստատված կաթսայական բավարարման դրված հրամանի մարդ/օրերի վերաբերյալ քաղվածքի հիման վրա:

7. Սննդի պատրաստման և մատուցման ծառայության պայմանագրի կնքումից անմիջապես հետո զորամասում առկա ջեռնային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումները,

խնիկական միջոցները, ճաշարանախոհանոցային սպասքը և գույքը մինչև պայմանագրի գործողության ավարտը անհատույց տրամադրվում է ծառայություն իրականացնող կազմակերպությանը, իսկ դրա դիմաց ծառայություն մատուցողը պայմանագրի գործողության ժամկետում ամեն օր մեկ զինծառայողի հաշվարկով լրացուցիչ հատկացնում է 100 գրամից միրգ` ըստ սեզոնի, թարմ կամ չորացրած մրգերից պատրաստված կոմպոտ` մեկ մարդու հաշվարկով օրական 200 գրամ:

8. Ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումների վերանորոգումը, սպասարկումը, ինչպես նաև ճաշարանախոհանոցային սպասքի և գույքի թարմացումը իրականացվում է ծառայություն մատուցող կազմակերպության կողմից:

9. Պայմանագրի գործողության ավարտից հետո ջերմային, սառնարանային, մեխանիկական և ոչ մեխանիկական սարքավորումները, ճաշարանախոհանոցային սպասքը և գույքը պատվիրատուին հանձնվում է սարքին վիճակում:

10. Ծառայություն մատուցող կազմակերպությունը անձնակազմի կերակրման գործընթացը իրականացնելու նպատակով, 250 անվողի համար բացի պատվիրատուի կողմից տրամադրված սպասքի, գույքի, սարքավորումների ըստ անհրաժեշտության ճաշարանը պետք է համալրի սպասքով, գույքով, սարքավորումներով: Դրանց թարմացումը և համալրումը պետք է կատարվի ծառայություն մատուցողի կողմից:

11. Ճաշարանները իր բոլոր արտադրամասերով, պահեստային տնտեսություններով ծառայություն մատուցող կազմակերպությանը տրամադրվում է կոսմետիկ վերանորոգված վիճակում սննդամթերքի պահպանումը և սննդի կազմակերպումն իրականացնելու համար: Նշված շինությունների շահագործման ընթացքում կոսմետիկ և ընթացիկ վերանորոգումը, անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվի ծառայություն մատուցողի կողմից:

12. Դաշտային պայմաններում սննդի պատրաստման և մատուցման համար նախատեսված տեխնիկական միջոցները տրամադրվում է Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի կողմից, իսկ շահագործումը և դրա համար անհրաժեշտ վառելիքի ծախսը իրականացվում է սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող կազմակերպության կողմից:

13. Ճաշասեղանները ու աթոռները տրամադրվում է ծառայություն իրականացնող կազմակերպությանը, դրանց ընթացիկ վերանորոգումը պետք է իրականացվի կազմակերպության կողմից, իսկ նորով փոխարինումը` պատվիրատուի կողմից:

14. Ճաշարանի, արտադրամասերի, սննդամթերքի և բանջարեղենի պահեստների սանիտարահիգիենիկ վիճակի պատասխանատվությունը կրում է ծառայություն իրականացնող կազմակերպությունը: Ճաշարաններում սննդամթերքի և բանջարեղենի պահեստների սանհիտարահիգիենիկ վիճակը, սննդի պատրաստումը, փոխադրումը և իրացումը կազմակերպել համաձայն <<Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջների (ՍԿ և ՀՆ 2-III-4,2-01-2003):

15. Սննդի պատրաստման և մատուցման ժամանակ ծառայություն իրականացնող կազմակերպությունը ապահովում է պատրաստման տեխնոլոգիայի գործընթացի, սննդամթերքի որակի, ռեժիմի, ընդունման, բաղադրատոմսերի պահպանման կանոնները և պատրաստի ճաշատեսակների ելքի նորմաները, ինչպես նաև մսի և ձկան չափաբաժինների համապատասխանությունը ՀՀ ՊՆ անձնակազմի սննդի կազմակերպման վերաբերյալ ՀՀ ՊՆ նորմատիվային և ղեկավար փաստաթղթերով սահմանված նորմաներին կամ օրենքով սահմանված այլ նորմատիվային փաստաթղթերի:

16. Սննդի մատուցումը պետք է իրականացվի օրվա կարգացուցակով սահմանված սննդի ընդունման ժամերին:

17. Զինծառայողներին հատկացվող պատրաստի ճաշատեսակների բաժանումը ծառայություն իրականացնող կազմակերպությունը իրականացնում է ճաշարահում, մթերքի բաշխման ցուցակում նշված պատրաստի չափաբաժինների ելքին համապատասխան քանակությամբ:

18. Սահմանված պայմանների խախտման դեպքում Պատվիրատուն սահմանում է թերությունների վերացման ժամկետ` 30 օրացուցային օր: Նշված ժամանակահատվածում թերությունները չվերացնելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծարել պայմանագիրը:

19. Անձնակազմին հասկացվող սննդամթերքի համար սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող կազմակերպությունը սննդամթերքի վերաբերյալ պետք է ունենա որակը հավաստող և անվտանգության վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր:

20. Յուրաքանչյուր օր կախված կերակրվող անձնակազմի թվաքանակից, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը կարող է տատանվել 1-ից 250 մարդով:

21. Սննդի պատրաստման և մատուցման ծառայություն իրականացնող անձնակազմը ենթարկվում է պարտադիր և պարբերական բժշկական զննության, համաձայն ՀՀ կառավարության 27.03.2003թ. N347-Ն որոշման:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չափման միավոր | Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Գումարը /ՀՀ դրամ/ | Ծառայության մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սննդի պատրաստման ծառայություն | մարդ/օր | 75 000 | 2640 | 198 000 000 | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
Տնօրեն՝ Գ. Սարգսյան

------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Բունտազյան 7
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020500760100
ՀՎՀՀ 00851011
Տնօրեն՝ Գ. Մարգարյան

------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 30 » հունվարի 2018թ. կնքված
ՄՄԱՌՎ -ՀԲՄԾՁԲ-8/4 ծածկագրով պայմանագրի

Վճարման ժամանակացույց*

| Հ/հ | Միասնական անվանացանկի CPV կոդը | Գնման առարկան | Չափման միավոր | Քանակը | Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում |
|---|---|---|---|---|---|
| 1 | 55321100 | Սննդի պատրաստման ծառայություն | մարդ/օր | 75 000 | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
Տնօրեն՝ Գ. Մարգսյան

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Բունիաթյան 7
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020500760100
ՀՎՀՀ 00851011
Տնօրեն՝ Գ. Մարգարյան

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 30.01.2018թ *ՄՄԱՌՎ -ՀԲՄԾՁԲ-8/4* կնքված պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու մասին

ք. Դիլիջան

<<06>> փետրվարի 2018թ.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը, ի դեմս Գ.Սարգսյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Գ. Մարգարյանի , ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով N ՄՄԱՌՎ -ՀԲՄԾՁԲ-8/4 գնման պայմանագրի 7.1 և 7.5 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան

1.1 Սույն համաձայնագրով Կողմերը որոշեցին հաստատել N ՄՄԱՌՎ -ՀԲՄԾՁԲ-8/4 գնման պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման և դրանց դիմաց ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /վճարման ժամանակացույց/գնման ժամանակացույց/ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սույն համաձայնագրում չնշված N ՄՄԱՌՎ -ՀԲՄԾՁԲ-8/4 գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

1.3 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև կնքված N ՄՄԱՌՎ -ՀԲՄԾՁԲ-8/4 գնման պայմանագրի անբաժանելի մասը:

1.4 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

### 2.Կողմերի հացեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ | «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ |
| ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1 | ք. Երևան, Բունիաթյան 7 |
| ,,Արարատբանկ,, | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ1510042359830100 | Հ/Հ 1570020500760100 |
| ՀՎՀՀ 07619891 | ՀՎՀՀ 00851011 |
| **Տնօրեն՝ Գ. Սարգսյան** | **Տնօրեն՝ Գ. Մարգարյան** |
| __________________________ (ստորագրություն) | __________________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 2
Հաստատված է
*«30» հունվարի 2018 թ. կնքված*
*ՄՄԱՌՎ -ՀԲՄԾՁԲ-8/4* գնման պայմանագրի փոփոխությամբ

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 55321100 | Հավելված 1 | դրամ | 198 000 000 | 1 | ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1 | Ծառայության մատուցման ավարտը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
**Տնօրեն` Գ. Սարգսյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Բուռնազյան 7
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020500760100
ՀՎՀՀ 00851011
**Տնօրեն` Գ. Մարգարյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
Հաստատված է
«30» հունվարի 2018 թ. կնքված
ՄՄԱՌՎ -ՀԲՄԾՁԲ-8/4 գնման պայմանագրի փոփոխությամբ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 1 | 55321100 | Սննդի պատրաստման ծառայություն | 49 500 000 | 49 500 000 | 99 000 000 | 99 000 000 | 99 000 000 | 148 500 000 | 148 500 000 | 148 500 000 | 198 000 000 | 198 000 000 | 198 000 000 | 198 000 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Մոնթե Մելքոնյանի անվան
ռազմամարզական վարժարան» հիմնադրամ
ք. Դիլիջան, Պարզ Լճի 5, 24/1,26/1
,,Արարատբանկ,,
Հ/Հ1510042359830100
ՀՎՀՀ 07619891
**Տնօրեն՝ Գ. Սարգսյան**

_______________________
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Բուռնազյան 7
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020500760100
ՀՎՀՀ 00851011
**Տնօրեն՝ Գ. Սարգսյան**

_______________________
(ստորագրություն)

Կ.Տ.